

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑԻ
(Մանվան 300-ամյակի առթիվ)

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

XVII դարը հայ ժողովրդի համար սկսվում է մի ահավոր աղետով: 1603 թ. Շահ Աբբասը հսկայական բանակով Սպահանից շարժվում է դեպի Արաքսի ափերը, դեպի Արարատյան աշխարհը, որպեսզի սկսի Թուրքիայի հետ վաղուց ծրագրվող պատերազմը, մանավանդ որ վերջինս իր շոշափուկները պարզել էր մինչև Թավրիզ: Պատերազմը չէր նախատեսում մեծ բանակների հանդիպում և վճռական ճակատամարտ: Թուրքերը իմանալով, որ Շահ Աբբասը մեծ բանակով շարժվում է դեպի Թավրիզ, իրենց բերդապահ զորքերը ետ են քաշում Երևան և վերջինս դարձնում են Շահ Աբբասի դեմ մղվող պատերազմի հիմնական հենակետը: Շահ Աբբասը արագ ռազմերթով մտնում է Արարատյան աշխարհը և շարժվում Երևանի վրա: Երկար պաշարումից հետո նա գրավում է Երևանի բերդը և ռազմերթը ուղղում դեպի արևմուտք: Թուրքերը մեծ բանակով դուրս են գալիս նրան ընդառաջ, բայց շահը ճակատամարտի չի բռնվում. նահանջում է իր ետևից թողնելով ամայություն, հրդեհ ու անապատ՝ բնակիչներին տեղահանելով ու քշելով դեպի արևելք: Ականատեսների վկայությամբ պատերազմի այդ հսկայական դաշտը ուներ չափազանց խիտ ազգաբնակչություն: Այդտեղ հաշվվում էին քսանից ավելի քաղաքներ և հազարավոր գյուղեր: Շահ Աբբասը Շիրակից, Կարինից, Արճեշից, Խնուսից, Բասենից քսաներեք հազար հայ գաղթականներ բերեց կուտակեց Արարատյան դաշտում և ապա սկսեց Արարատյան աշխարհի դատարկումն ու հրդեհումը, որպեսզի թուրքական արշավող բանակը իր կարիքների համար ոչինչ չգտնի ճանապարհին: Այսպիսով՝ Արևմտյան Հայաստանի մի մասի, Շիրակի, Արարատյան աշխարհի ու հարակից գավառների ամբողջ հայությունը քշվեց Արաքսի ափը և տարվեց Պարսկաստան: Հայաստանի մեծ մասը ամայացավ: Այս աղետը ժամանակակիցների վրա ցընցող տպավորություն է թողել: Մեծ տարագրությունը, որ ժամանակակիցները կոչում են «մեծ սուրգյուն», այնքան էր շմեցուցիչ, այնքան էր ահավոր իր չափերով ու հետևանքներով, որ անկարելի էր սրա մասին գրավոր հիշատակարաններ չթողնել գալիք սերնդի համար: Եվ ահա Փիլիպպոս կաթողիկոսի առաջարկությամբ Առաքել Դավրիժեցին գրում է իր «Պատմությունը», որ գրեթե սկսվում է «մեծ սուրգյունի» նկարագրությամբ ու ողբով: Իր պատմության բովանդակությունը Դավրիժեցին գրքի առաջաբանում հստակ ու ձարձառոտ բնութագրել է հետևյալ խոսքերով. «Պատմություն է այն անցքերի ու հարվածների, որոնք վերջին ժամանակներս Շահ Աբբաս կոչված թագավորի և նրա ազգի կողմից, որ պարսիկներ են կոչվում, թափվեցին մեր հայոց աշխարհի վրա: Նաև էջմիածնի սուրբ աթոռի, նրա կաթողիկոսների անշքանալու և քրիստոնեական կրոնի աղավաղված կարգերի մասին է: Սրանց

հետ աշխտեղ կգտնես ըստ ժամանակագրության զխակարգված պատմություններ քաղաքներին ու գավառներին պատահած անցքերի, որոնք կատարվեցին թագավորների, իշխանների, կաթողիկոսների և այլոց կողմից»¹։ Իսկապես, եթե չհաշվենք վկայաբանական պատմությունները, թանկագին քարերի մասին տեղեկությունները, հրեաների բռնի իսլամացումը, մի քանի ավանդություններ, պարսկական ու օսմանական թագավորների և մեր կաթողիկոսների համառոտ ժամանակագրությունները և այսպես շարունակ Ծարեցի վարդապետի «Աղվանից աշխարհի պատմությունը», որ մի խեղճ կցորդում է, ապա ինքը՝ Դավրիժեցին իր գրքի հիմնական բովանդակությունը բնութագրել է։ Բայց դա գրքի բովանդակության բնութագրությունն է, իսկ նրա պատմա-գիտական, գրական, լեզվական, պատմամշակութային նշանակությունը շատ է կարևոր XVII դարի մեր պատմության համար։

Առաքել Դավրիժեցու պատմությունը ժամանակագրական մի ճշգրիտ ղավերագրություն է, որ հեղինակը քիչ է մնում, որ հիշատակի կատարված պատմական իրողությունն նաև ժամը (ասենք, կան նաև այդպիսի նշումներ)։ Նա արդեն խորենացու պատգամով՝ «չիք պատմություն առանց ժամանակագրության», գրում է. «Այլև աշտեղ (առաջաբանում) հարկ է իմանալ, որ անհրաժեշտության պարագայում թվականը իբրև հիմք պետք է դնել, ապա նրան կցել պատմությունը իբրև շինվածք»²։ Բայց որովհետև մեր ազդը ավարառուների, գերիշների, հարկապահանջների կողմից ցար ու ցիր է եղել՝ ջարդված, կաշկանդված, տառապած ու կապված աղբատություն, ուստի պատմիչը հավանակ իր երկար թափառումների չի գտել այնպիսի մեկը, որ պատմության հետ իմանա նաև թվականը, այդ պատճառով նա մեծ շարշարանքով հետադուսում է և ինչ թվականություն որ գտնում է, հիշատակում է։

Դավրիժեցին ժամանակագիր պատմիչ է, այսինքն՝ նկարագրում է իր ապրած ժամանակի անցքերն ու եղելությունները։ Նա մի տեղ նշում է, որ սեփական աչքով տեսել է հայ ժողովրդի ահասարսուռ զաղթեցումը Շահ Աբբասի կողմից, երբ երևի նա մի տասնամյա երեխա պետք է լիներ, որովհետև նրա մահվան ստույգ թվականը 1670-ն է։ Ժամանակագիրը ոչ միայն պատմում է իր տեսածներն ու լսածները, այլև օգտագործում է տվյալ ժամանակի վավերագրերը և ուրիշ ժամանակագիրների գործերը։ Սակայն Դավրիժեցին իբրև XVII դարի պատմիչ-ժամանակագիր ամենանշանավորն է։ Ամբողջ XVI դարը, թաթարա-թուրքական բարբարոսության հետևանքով, ոչ մի հայ պատմիչ կամ ժամանակագիր չունի, որ անցնելու XVI դարը և նկարագրեր այս դարասկզբի պատմական անցքերը, իսկ Դավրիժեցին իր պատմությունը ձևաբանում է երկրորդ դարակեսի սկզբին՝ 1651 թ.։ Չորս տարի աշխատելուց հետո հեղինակը լքում է գործը ամբողջ երեք տարի և ապա վերսկսում 1658 թ. Նաև կոր Ջուղայեցի կաթողիկոսի պարտադրանքով։ Գիրքը ավարտվում է 1662 թ.։ Ուրեմն Դավրիժեցին իր պատմությունը սկսել է, երբ դարի կեսը վերջացել էր արդեն, իսկ ինքը 60-ն անց մարդ էր։ Իր իսկ ասելով այնպես է ստացվել, որ պատմությունը գրել է ոչ թե «առույգ երիտասարդության օրերում, այլ ուղորմելի ծերության»։ «Ողորմելի ծերությունը» սկսվում է 60-ից հետո, երբ պատմիչը նաև ցավազար էր մարմնով, աչքերի լույսը պակասել էր, ձեռքերը

1 «Պատմություն Առաքել վարդապետի Դավրիժեցու», Վաղարշապատ, 1896, էջ 3։
2 Նույն տեղում։

թուլացած դողում էին, մահվան հրավերքը արված էր: Ահա այս պարագաներում է դրվել XVII դարի մեր ժողովրդի այդ ողբերգական շրջանի պատմությունը:

Ինչպես ասվեց, սա մի տեսակ ժամանակագրություն է: Բայց հեղինակը 1651 թ. առաջ փաստագրե՞լ է պատմական անցուղարձը. հավանորեն ոչ: Եթե այդպիսի մի բան արվել է, ապա դա եղել է 1651 թ. հետո, այսինքն մի տասնամյակի պատմություն, երբ շարադրվում էր այս գիրքը: Դավրիժեցու աղբյուրները եղել են նախ և առաջ ականատես մարդիկ: Փիլիպպոս կաթողիկոսը պարտագրել է Դավրիժեցուն պատմություն գրել իմաստուն, առաքինի և շատ ծեր մարդկանց դիմումների պարտադրանքով, որոնք տեսել էին իրականությունն ու անցքերը: Պատմիչը շրջել է Հայաստան, Պարսկաստան, Փոքր Ասիա և ամենուր հանդիպել է պատմություն իմացող անձանց, հարցուփորձել նրանց ու գրանցել դրանք: Բայց որովհետև իրեն սլատասխանատու է համարել պատմության, ժողովրդի ու եկեղեցու առջև, պատմական միևնույն իրողությունները ստուգել է բազմաթիվ ականատեսների ու տեղյակների միջոցով և այնպես է եղել, որ միևնույն պատմությունը տասն անգամ գրել է ու ջնջել, մինչև վերջնական տեսքի է բերել՝ ճշմարտության հասնելու միտումով: Մյուս կարևոր աղբյուրները եղել են գրավոր հիշատակագրությունները, այստեղ էլ նա ոչ մի ջանք չի խնայել գտնելու իր պատմության համար պիտանի նյութեր: Ընդ որում գրավոր նյութերին շատ անգամ այնքան վստահությունամբ է մոտեցել, որ դրանք ամբողջովին ներառել է իր գրքում: Այդպես է «Պատմութիւն Աղուանից աշխարհին» գլուխը, որ նույնությամբ վերցրել է Հովհաննես Ծարեցուց և տեղագրել այստեղ և որը, ցավոք, շատ քիչ է առնչվում XVII դարի հայոց արևելից երկրի պատմությանը: Դավրիժեցին այն եզակի պատմիչներից է, որոնք ուշադրություն են դարձրել մեր ձեռագրաց հիշատակարանների վրա իբրև պատմության հավաստի աղբյուրների և օգտորվել է դրանցից: Այս պատմության առանցքը հանդիսացող Շահ Աբբասի արշավանքները և հայոց մեծ գաղթը կատարվել են Դավրիժեցու պատմության դրառման օրից ամբողջ կես դար առաջ: Այնպիսի մանրամասն ստուգապատում ու սրտառուչ շարադրանք այդ անցքերի մասին պատմիչը չէր կարող հիշել, մանավանդ որ նա այն ժամանակ դեռևս մանուկ է եղել: Այս առթիվ ինքը վկայում է. «Եւ այս գործը, որ հայոց ազգը քեց-տարաւ... գտա լավատեղյակ բազմաթիւ մարդկանց, որ իրենք իսկ քշված էին. դրանցից հարցնելով՝ տեղեկացա. նաև գրքերի հիշատակարաններից տեղեկացա, որոնք կարդացի, թե յոթ-ութ անգամ առանձին-առանձին միմյանց ետևից քշել ու տարել է»³: Կոստանդնուպոլսի հրդեհի մասին պատմում է այսպես. «Այս հրկիզությանը մենք ականատես չենք եղել, որովհետև այդ օրերին Սուրբ աթոռ էջմիածնում էինք. իսկ մեր միաբաններից մեկը, որ կոչվում էր Ստեփաննոս վարդապետ՝ լինելով Մեղրի գյուղից, այդ ժամանակ Կոստանդնուպոլսում էր և իր կյանքի մասին միաբաններին գրելով, դրել է նաև մեծ քաղաք Կոստանդնուպոլսի հրկիզության մասին»⁴: Եւ այս նամակը նույնությամբ բերում է պատմիչը: Դավրիժեցին ոչ միայն օգտագործել է իր ժամանակին վերաբերող գրավոր փաստաթղթեր, այլև անցյալի մասին նա առանց

³ Նույն տեղում, էջ 148:

⁴ Նույն տեղում, էջ 561:

աղբյուրների չի խոսում: «Պատմության» Սն ղլուխը մի համառոտ ժամանակագրություն է, որն սկսվում է 561 թ. և վերջանում է 1665-ով: Պատմիչը հիշյալ ժամանակագրությունը կարգավորում է, թվականությունների հաջորդականությունը ճշտում և լրացնելով իր օրերի ժամանակագրությամբ, տեղագրում է դրբի մեջ: Այդպիսի գրավոր հիշատակարանների արդյունք են և. լԱ, լԲ, լԶ, ՍԱ, ՍԲ, Ն՞ի գլուխները: Սրանցից առաջինը Գրիգոր լուսավորչի աչի պատմությունն է, երկրորդը հայ կաթողիկոսների ժամանակագրությունն է, որ սկսվում է Ներսես Կլայեցուց (1165 թ.) և վերջանում է Հակոբ Զուղայեցի կաթողիկոսով (1655 թ.): Այս ղլուխը պատմիչը վերջացնում է այսպես. «ՌՃԴ (1655) թվականի ապրիլ ամսի ութին Հակոբ վարդապետին օրհնեցին սուրբ էջմիածնի կաթողիկոս. և այժմ սա է վարում կաթողիկոսության իշխանությունը մինչև այսօր, որ ՌՃԺԱ (1662) թվականի հուլիս ամսի 4-ն է՝ Սյուս ղլուխները նույնպես մեծ մասամբ ժամանակագրություններ են, որոնք որոշ խմբագրությամբ առված են պատմության մեջ:

Թե՛ իր գրածները և թե՛ ուրիշներից վերցրած հատվածները արժեքավոր նյութեր են հայոց պատմության համար: XVII դարի մեր պատմությունը կցկտուր մի անորոշություն կլինե՞ր առանց Դավրիժեցու գրքի: Առաքել Դավրիժեցին ղուտ փաստագիր չէ՝ բաղաբական անցուղարձերի, թաղավորների ու կաթողիկոսների կյանքի ու գործունեության: Ամենից՝ կարևորը մեղ համար մեր մտավոր զարգացման պատմությունն է, որ այնպես մանրամասնաբար նկարագրել է պատմիչը: Թաթարա-թուրքական արշավանքները ամայացնելով ու պարբերական սովի ու համաճարակների մատնելով երկիրը՝ ոչընչացրել էին մեր մտավոր կենտրոնները, զպրոցներն ու վանական միաբանությունները վերացել էին: Նման պայմաններում զպրոցների ու մշակութային կյանքի մասին մտածելն իսկ ավելորդ էր:

Շահ Աբբասի արշավանքներին ու հայերի բռնի զաղթեցմանը հաջորդող ժամանակները ունենում են մեջընդմեջ խաղաղության տարիներ: Ահա այս տարիներին հայությունը, իր աղգային գոյության հարատևման դիտակցությանն ու ներքին բնազդին հավատարիմ, ջանում է համատարած խավարի ու ամալության անապատում վառել լուսո՝ ճրագներ և աղատվել բռնի վայրենացման ճիրաններից: Պատմիչը մի շարք հատվածներում ոգևորված, սիրով ու հրճվանքով պատմում է անհատական այն հերոսական խիզախումները, որոնց շնորհիվ երկրում կազմավորվում են միաբանություններ և սըրանց կից զպրոցներ: Մեր պատմության ամենաուսանելի մի իրադրությունն է այս, որ Առաքել Դավրիժեցին դարձրել է իր պատմության առանցքային նյութերից մեկը: Նա մանրամասն պատմում է, թե ինչպես տե՛ր Կիրակոսն ու Սարգիս եպիսկոպոսը Սյունիքում նոր անապատ են կազմակերպում, որի զպրոցից ղուսն են դալիս Պողոս վարդապետ Մոկացին, Մովսես վարդապետ Սյունեցին, Ներսես վարդապետ Մոկացին, որ բաց է անում իմի անապատն ու զպրոցը, Կարապետ եպիսկոպոս էջմիածնեցին, որ շինում է Սևանի անապատն ու զպրոցը, տե՛ր Արիստակեսը, որ հիմնադրեց Տանձափարախի անապատը, Դավիթ եպիսկոպոսը, որ ստեղծեց Զարեթաղետի անապատը, և ուրիշ շատերը, որ ղնացին դանազան տեղեր, շինեցին անապատներ ու վանքեր և սրանց կից զպրոցներ: Դավրիժեցին փաստորեն գրում է XVII դարի մեր ղըպ-

⁵ Նույն տեղում, էջ 410:

րոցների կաղմակերպման ու զարգացման պատմությունը՝ ավելացնելով. «եւ սուրբ հոգին... բացում է նրանց մաքուր մտքերի առջև գիտության զոռները, խելամուտ է դարձնում նրանց գրքերի շավիղներին, որոնցով լուսավորվում են իրենք և լուսավորում մերձականերին և սրանցով մեր հայոց աղգին, որովհետև մինչև այս ժամանակները տգիտությամբ խոսպանացել էր ու կորզացել մեր հայոց ազգը, ու ոչ միայն չէին կարգում, այլև գրել-կարդալ չգիտեին և չէին ըմբռնում գրքերի նշանակությունը, որովհետև գիրքը մարդկանց աչքում իր պիտանիությունը կորցրել էր»⁶։ Հայոց հարուստ պատմա-դրության մեջ չկա մի գիրք, որ այնքան մանրամասնորեն ներկայացնի հայոց դպրոցների պատմությունը, ինչպես Դավրիժեցին է ներկայացրել։ Նա շրջելով Հայաստանում և հայաբնակ օտար վայրերում՝ ամենուրեք ուսումնասիրել է դպրոցական գործը և նկարագրել։ Այս առումով ամենից հետաքրքրեցնական գրվազը Բաղեշի Ամրդուռ վանքի ու դպրոցի նկարագրությունն է, որ նա տվել է իր գրքի ԻԹ գլխում։ Դպրոցներում կրոնական գրքերը կարդացնելն ու բացատրելը շատ հեշտ էր. սակայն Ամրդուռ վանքի միաբան Բարսեղ վարդապետը որոշում է դպրոցներում տարածել հունական փիլիսոփայության և Դավիթ Անհաղթի գրքերի ուսումը. բայց նա գիտեր, որ հայոց ոչ մի ուսումնական այս դպրում հիշյալ գրքերը չի կարգում և չի հասկանում, ինքը ևս փորձում էր կարդալ, բայց դարձյալ դրանք մնում էին անհաղթահարելի։ Նա «ըզանքով ձգտում է վերահասու լինել այդ գիտությանը ոչ միայն իր համար, այլ մանավանդ ազգի համար, որպեսզի արժարժեղով սփռվի մեր հայոց ազգի մեջ, որ բոլորը վերահասու լինեն այդ գիտության շնորհներին»։ Եվ Դավրիժեցին նկարագրում է, թե Բարսեղը դիվական ինչ համբերությամբ և ուշադրությամբ միևնույն անհասկանալի գիրքը հարյուր անգամ կարդում է և ամեն անգամ մի նոր նվաճում է անում, մինչև որ ամբողջը հասկանում է և հետո սովորեցնում է իր աշակերտներին։ Սկզբում տքնում է Սահմանաց գրքի վրա, ապա անցնում է Պորփյուրին և հետո մյուս փիլիսոփայական գրքերին։ Բարսեղից հետո փիլիսոփայական գրքերի ուսումնասիրությունն ու տարածումը ստանձնում են Ներսես վարդապետն ու Մելիքսեթ Վժանցի աբեղան։ Եվ պետք է կարդալ Դավրիժեցուն ու տեսնել, թե ինչ հրձվաճրով է խոսում նրանց տիտանական ջանքի ու տքնության մասին, որ կարողացան բոլորովին անհասկանալի գրքերը հասկանալի դարձնել և ուսուցանել ու տարածել։

Դավրիժեցին կսկիծով է նշում, որ իր ժամանակ հայ ազգը ոչ միայն չուներ անկախ պետություն, այլև վերացել են տեղական անկախությունները, ուստի և դառն ու ավանդական բացատրությամբ ողբում է այս ծանր իրականությունը։ «Մեր հայոց ազգը... ոտքի կոխան ծառա ու գերի դարձավ օտար ազգերի ու թագավորների»⁷։ Չկա քաղաքական իշխանություն, պետականություն, որ պատմիչը դարձնի իր պատմության առանցքը, ուստի նա ուշադրությունը սեւեռում է իր ժողովրդի մշակութային կյանքի պատմության վրա։ Մեր պատմիչներից ոչ մեկը այնպիսի մանրամասնությամբ չի խոսում երկրի շինարարական գործի մասին, ինչպես Դավրիժեցին։ Նա ոչ միայն նկարագրում է նոր վանքերի, եկեղեցիների, ամրոցների ու շենքերի կառուցումն

⁶ Նույն տեղում, էջ 253։

⁷ Նույն տեղում, էջ 147։

ու նրանց կառուցողներին, այլև մանրամասն պատմում է հին կառույցների մասնակի վերանորոգումները, նկարադարձումները, պարսպասիւսները և այլն: Զնաշված այն կառույցները, որոնք նկարագրված են միջանկյալ կերպով գրքի տարրեր հատվածներում, պատմիչը ամբողջ Իջ գլխում շարադրում է երկրում կատարված կառուցողական աշխատանքները, հիշատակում նրանց կառուցողներին⁸:

Առաքել Դավրիժեցին լինելով իր դարի վաղակը և տուրք տալով ժամանակի սնահավատություններին, սրբաբար հրաշագործություններին, վկայաբանական հրաշքներին, այնուամենայնիվ մի լուսամիտ ու առաջադեմ մարդ էր: Իրրև կրոնավոր և XVII դարի մարդ նա շատ շպետք է ոգևորվեր հունական փիլիսոփայական գրքերի ուսուցմամբ ու տարածմամբ, բայց մենք տեսանք, թե ինչ խանդավառությամբ է ընդունում այդ փաստը: Նա փառաբանում է նկարչական արվեստը, և ամենից էականը այն է, որ նաև հասկանում, վերլուծում ու զնահատում է այն: Ահա ինչպես է հայրենասեր պատմիչը նկարագրում հայոց վանքերի ճարտարասպետական ու քանդակագործական բարեմասնությունները: Ենւ վերկնանման և դարձրաբերձ և զգմբեթաշէն կոփածու և հաստահեղոյս վիմօք կառուցեալ ղեկեղեցիս աշխարհիս Հայոց: Յորում յօրինեալ ղանաղան և պէս պէս նկարս և տեսակս շուշանաց և կենդանակերպից, զեղեցիկ յօրինուածքով քանդակեալք ի վէմս պէս պէս հնարակերտութեամբ: Որոց ձևն և դիր շինուածոյն և սիւնքն և ախաւեղադէսք կամարացըն աղղի աղղի, և լուսանցոյցքն և դրունքն և ամենայն ինչ խորհրդական»⁹: Եւ պատմիչը շատ լավ է ըմբռնում, որ այդ ձևական բոլոր կատարելությունները ինքնասպասակ չեն, դրանք ունեն իրենց իմաստն ու նշանակությունը, որ Դավրիժեցին արտահայտել է խորհրդական բառով:

Այս առումով շատ ավելի հետաքրքրական է նոր Զուղայի հայ տաղանդավոր նկարիչ Մինասի արվեստի ըմբռնումն ու վերլուծությունը, որին պատմիչը անդրադարձել է ԻԹ գլխում: Դավրիժեցին ոչ միայն պատմում է նրա նկարչական ուսումնառության մասին, այլև մանրամասն թվում է այն թեմաները, որոնք նյութ էին դառնում տաղանդավոր նկարչի ներկասիւսակին: Դավրիժեցին հիշատակում է, որ Մինասը նկարում էր յուղաներկով, չրաներկով, թղթի, կտավի, տախտակի, պղնձի վրա: Նա որմնանկարիչ էր, դիմանկարիչ էր, բնանկարիչ էր, ծաղկարար էր և ամեն կարգի նկարներ էր անում, եթե հարկը պահանջում էր: Մինասը պահում էր աշակերտներ, որոնցից, ասում է պատմիչը, ոչ ոք չհասավ նրա արվեստի մակարդակին: Պուր ուշադրություն դարձրեք այն պարագայի վրա, որ պատմիչը հստակ դադափար ունի յուղանկարչության, չրանկարչության, դրվազման, որմնանկարչության, մանրանկարչության, դիմանկարչության, բնանկարչության և այս արվեստի այլ տեսակների մասին: Նա այսօրվա ընթերցողին հստակ ու պարզ գաղափար է տալիս Մինասի արվեստի էության մասին: Թվելով Մինասի բոլոր թեմաները, նա ասում է, թե նկարում էր նաև մարդկանց, որ աղղից էլ որ լինեին, և ինչ աղղի մարդու կերպարանք որ նկարում էր, հար ու նման էր նկարում: Պատմիչը իր վերլուծությունը առաջ տանելով ասում է՝ նկարիչը մարդու դիմանկարի վրա արտահայտում էր ծիծաղը, բարկություն-

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 346—353:
⁹ Նույն տեղում, էջ 53—54:

ներ, տրտմությունը, հարբեցությունը, հորանջը, ուրախությունը, ուզմի պահը: Մարդը ինչ բնավորությամբ ու տրամադրությամբ լինում էր, այդպես էլ նա նկարով արտահայտում էր: Նա նկարում էր գեղեցկությունը, դեմքի գույները, հասակի առանձնահատկությունները: Ահա երկարաբանության արդյունքը, որով հանդես է բերվում XVII դարի մի մեծատաղանդ նկարիչ և այդ նկարչի՝ ժամանակի մի քննադատ, որ ինքը Դավրիժեցի պատմիչն է: Իսկ կարճաբանության արդյունքը այն է լինում, որ Մինասի հետ հիշատակված նկարիչ Հակոբջանի մասին ոչ մի խոսք ու տեղեկություն չկա: Հավանաբար տարվելով Մինասի արվեստի գեղեցիկ վերլուծությամբ, մոռացել է Հակոբջանին¹⁰:

Դավրիժեցին նաև գրականության պատմաբան է: Նա մանրամասն տեղեկացնում է, թե ինչ գրքեր են գրվել ու թարգմանվել XVII դարում, քննադատում է այդ գրքերի թերություններն ու պակասությունները: Նա մանրամասնորեն ներկայացնում է Սիմեոն Զուղայեցու և Ստեփանոս Լեհացու գրական գործունեության պատկերը, մեկ առ մեկ թվում է այն գրքերն ու աշխատությունները, որ իր այդ երկու ժամանակակիցները գրեցին, բացատրում է նրանց բովանդակությունը, քննում ու քննադատում է միանգամայն առողջ ու առաջավոր դիրքերից: XVII դարի հեղինակը, որ ծնվել է ու կրթվել լատինաբար հայերենի շրջանում, առիթ չի փախցնում այդպիսի հայերենը քննադատելու: Նա որևէ գրքի առաջին թերությունը համարում է նրա ճոճումաբանությունը, անհասկանալիությունը:

Քանի որ խոսք եղավ լեզվի քննադատության մասին, շմոռանանք այստեղ հիշատակության արժանացնելու նաև իր՝ Դավրիժեցու լեզվի ու ոճի առանձնահատկությունները: Դավրիժեցին իր գիրքը գրել է գրաբար՝ լեզվով: XVII դարի գրաբարը իր անկման ծիրին էր հասել. այն ոչ միայն խոսակցական լեզու չէր, այլև լատինամով կրոնավորների ձեռքով ամբողջովին աղավաղվել ու կորցրել էր իր ազգային ու ժողովրդական կերպարանքը թե՛ քերականական կառուցվածքով և թե՛ բառապաշարի փոփոխությամբ: Դավրիժեցին պիտակցաբար չի հետևում ժամանակի հակաժողովրդական լեզվական այդ ուղղությանը. սա դեռևս քիչ է նրա համար: Նա մերժում ու քննադատում է այդպիսի լեզուն ու ոճը և իր գրքի ստեղծման գաղափարի հիմքում դնում է ժողովրդին հասկանալի դառնալու աղնիվ սկզբունքը, որին նա հավատարիմ է մընում ամբողջ շարագրանքի ընթացքում: Չորս հարյուր էջանոց ստվարածավալ գրքում չեք գտնի գրաբար այնպիսի մի արտահայտություն ու դարձվածք, որ ժամանակի սովորական կրթություն ստացած՝ միջակ գրագիտություն ունեցող մարդու համար անհասկանալի լինի: Ամեն ջանք ու հնարք հեղինակը գործադրում է ընդհանրության համար հասկանալի դառնալու, որովհետև նրա ողջ մտահոգությունն ու վիշտը այն է, որ երկար ժամանակ հայությունը մընացել է առանց դպրոցի ու գրքի: Դավրիժեցին յուրահատուկ լուսավորիչ է՝ առանց XVII դարի լուսավորական գաղափարներին ծանոթ լինելու: Նա գրքում է վարմանալի կենդանի ու խոսուն մի լեզվով, մի գրաբար, որ կարդացողը երբևր մտքով չի անցկացնի, թե սա միայն գրական լեզու է առանց բանավոր խոսքի՝ կենսատու շնչի ու ջերմության: Կարելի է ենթադրել, որ

¹⁰ Արվեստաբան Մ. Ղազարյանի հաղորդումով Նոր-Զուղայի Ամենափրկիչ վանքի թանգարանում պահպանվել են երկու դիմանկարներ, որոնք վերագրվում են Մինասին (տե՛ս «Պատմաբանասիրական հանգես», 1968, № 1, էջ 201):

կրոնավոր հեղինակը իր միջավայրում հենց այս լեզվով էլ խոսել է։ Դրքի ամենագրական հատվածը, որ խորենացու մեծ շնչով ու թախիծով գրված հոյակապ ողբ է, գրաբար հայերենի վերակենդանացման զարմանալի փորձ է և վերաբերում է հեղինակի՝ օտարների կողմից ամայացված ու անմարդաբնակ դարձրած շքնաղ հայրենիքին։ Ճնա և զբարեհամ ու զականակիտ զըմշտահոսան աղբերակունս ջուրցն. և զկարկաշահոս ծիծաղախիտ յաւէտընթաց յառաջխաղաց վտակս ջուրցն, որ ի զլիսոց ձյունաբարդ սպիտակափայլ բարձրաբերձ լերանց առ ի ստորև հոսեալ իջանէ ի դաշտ անդր և շինութիւն (շէնութիւն) նոցին մատակարարէ։

Նա և զքաղցրաշունչ և զառողջարար և զկենդանապարզ և զօդ և զհողմ սորին և զայլ ամենայն վայելչութիւն սորա տեսանելով հեղձամղձուկ եղեալ փղձկիմբ և հարեալ յարտասուս ողբամբ և աշխարեմբ, զի անապատ եղև վայելուչ և քաղցր աշխարհս մեր։ Եւ ազգ և ժողովուրդ մեր խլեալք ի տեղեաց և անջատեալք ի հայրենի և բնիկ ժառանգութեանց և յօրհնեալ յերկրէ, որ լի էր նշխարօք սրբոց աստուծոյ և ոռոգեալ արեամբ սրբոց վկայից և օրհնեալ քարոզութեամբ սրբոց առաքելոց՝ եղև վտարանդեալք և տարամերժեալք յերկիր օտար և յազգ ալյասեռ և ալյալիզու, որ և թշնամիք հոգւոյ և հաւատոյ, և արեան ծարաւիք մարմնոյ։ Որք և անդէն օր աւուր առ սակաւ սակաւ նուաղին, ոմանք մահուամբ և կորստեամբ և ոմանք հաւատոյ ուրացութեամբ, որք դառնան յանօրէն օրէնս պղծոյն անապատի։

Եւ յաղագս երկնանման և ադինասարաս¹¹ եկեղեցեաց զի՞նչ ասացից, որք ի խաւարի մնացեալ և ի բնակչաց թափուր եղեալ, մերկացեալ ի զարդուց, եղեալ հանգրտանք համբարուաց և ջալլամանց ըստ Եսայեայ տեսանողի, որչք աղուիսուց և նապաստակաց, մակաղատեղք խաշանց և անդէոց, բոյնք թռչնոց և աւերաբնակ բուաց։ Փոխանակ օր աւուր նորոգման, օր զհետ աւուր խարխալեալ և քայքայեալ աւերեալ փլուզանի. փոխանակ բուրման խնկոց անուշից՝ լցեալ ողբովք, լռեալ ձայնք փառաբանչաց և կատարմունք տօնից տարեկանաց և մատուցմունք փրկական պատարագաց։

Արդ՝ պիտոյ է մեզ աստանօր հինն Երեմիաս, զի ողբասցէ վնորս Իսրայէլ. վազն զի ըստ քերթողահօրն Մովսիսի ողբերգակի ոչ ևս դառնայ առ մեզ փեսայն, այլ անդարձ գնացիւք հեռացաւ ի մէնջ։ Արդ կարդացուք զանուն ազգիս մերոյ վայքաբովթ¹², քանզի բարձեալք են փառք յԻսրայելէ ըստ ի հնումն ասացելումն»¹³։

Այս է գրքի ամենազուտ գրական լեզվի օրինակը. իսկ հենց այս հատվածի վերջին բառից հետո կարդում ենք. «Դարձեալ դարձցուք ի յոճ նախկին պատմութեան մերոյ, ի բանն զոր հասուցաք զՋղալօղլին ի նախշուան և զշահն տարաք ի Թարվէղ»¹⁴։ Այս պարզ ժողովրդական, նույնիսկ տեղ-տեղ հեքիաթային ոճով ու արտահայտություններով է գրում Դավրիժեցին։ Ուշադրութիւն դարձրեք, թե ինչպես է ուրիշի անուղղակի խոսքը ձուլում իր հեղինակային խոսքի հետ ճիշտ այնպես, ինչպես անում է մեր գյուղացին, երբ որևէ բան է պատմում։ Ճիսկ մնացեալ զօրքն օսմանցւոց, որք ի քաղա-

¹¹ Դրախտանման։

¹² Երբայերեն՝ փառագուրկ, փառքից զրկված։

¹³ Նույն տեղում, էջ 54—55։

¹⁴ Նույն տեղում, էջ 55։

քէն Թարվիղու փախեան և որք ի պատերազմէն ղերծան, գնացեալ ժողովեցան ի քաղաքն Նախշուան: Եւ ընդ զօրացն Նախշուանու խորհեցան խորհուրդ, թե թաղաւորն Պարսից վասն այսմ աշխարհիս եկեալ է, և ղիարդ և իցէ, վերջն տյն է, որ նա առնլոց է ղաշխարհս ղայս ի ձեռաց մերոց: Արդ՝ նախ քան ղգալն նորա մեք կողոպտեալ և աւարեալ յափշտակեսցուք ի գեղորէից գաւառիս, որքան կարեմք և առեալ գնասցուք»¹⁵: Գեղջկական այս պարզութիւնը արատ է դիտական պատմագրութեան համար, յայց սա չի ասված XVII դարի համար. մենք արդեն ասացինք, որ սա բարձր լուսավորականութեան ու վերադարձումի արտահայտութիւնն է, որ նկատվում է ոչ միայն Առաքել Դավրիժեցու, այլև Զաքարիա Քանաքեռցու, Գրիգոր Կամախեցու պատմագրութիւններում: Ծիշտ է, սա տանում է դեպի գրաբար լեզվի կանոնադանցում ու աղավաղում, բայց բնական խոսքի պարզութեան կենսահորդ ավիշները այնքան են հարազատ, որ մոռացնել են տալիս ամեն կարգի կանոնադանցութիւնն ու սխալանք: «Յետ այսորիկ բերին ղՄելիքսէթն յերևանայ բերդի մէջն և ի վերայ գետնոյ տարածեցին ղնա և ի չորից կողմանց քարշեալ պրկեցին ղնա կապեալ ի ցիցս, և արկին յորսայս և առեալ ղբեռաքաշս, այսինքն՝ քալբաթին, և այնու կտրեցին ղմիսն ծղեացն, որ է թևերն»¹⁶: Կանոնադանցվում է ոչ միայն գրաբարի բերականական համակարգը, այլև բառապաշարը: Դավրիժեցին չի խուսափում թուրքերեն ու պարսկերեն ուղ փոխառեալ բառերի կիրառութիւնից: Դրանք երկու ձևով են երևում հեղինակի բառամթերքում. մեկ հանդես են գալիս բնագրում՝ մյուս բառերի հետ հավասար մակարդակով, իբրև մյուս բառերի հետ բնագրի շարադրանքի արտահայտիչ, մեկ էլ դառնում են կողմնակի բացատրութեան, հայերեն բառը թարգմանելու և հասկանալի դարձնելու օժանդակ միջոց: Նշենք նաև, որ առաջին դեպքում, այսինքն, երբ օտար բառը խլել է հայերեն բառի բնագրային տեղը, վերջինս (հայերեն բառը) է դառնում օժանդակ բացատրութեան միջոց: Օրինակ՝ «Ես ի ժամ պատերազմին յորժամ ետիշ (յարձակումն) առնէին և կամ զսիբայս ի վեր քշէին, ղքրիստոնեայսն յառաջ խաղացուցեալ ընդդեմ հրոյ և սրոյ մատուցանէին»: Եւ շահիսէվան (շահին սիրող, այսպես է բնագրում — Վ. Ա.) էր ձևացեալ»: «Հրամայեաց յալլաք (պարգև) տալ նոցա, և ևտուն հինգ յալլաք»: «Եւ ինքն շահն ամենայն բանական Պարսից ընդ արքունի ճանապարհն, այսինքն ընդ ջաղաին, յուղի անկեալ գնացին ի քաղաքն Թարվէղ»: «Եւ յորժամ վճարիցէք ղամենայն, առէք ձեզ գիր աղատութեան և վճարման, այսինքն՝ զղաբս»: Իհարկե միշտ չէ, որ օտար բառերը բացատրվում են, երբեմն մոռացմամբ գրում է օտար բառը ու անցնում, կամ գուցե տվյալ դեպքում մոռանում է հայերեն համանիշը. «Երբեմն սիբայ բարձրացուցեալ ի վերուստ ծեծէին. երբեմն ի ներքուստ ղյատակս պարսպացն փորեալ նաղմն առնէին և ղայն լնուին բարութով հրդեհէին»:

Դավրիժեցին ունի նաև խոսքի տիպականացման ըմբռնումը. նա ըստ խոսողների հասարակական դիրքի, ըստ տվյալ իրադրութեան, ըստ մարդկանց կրթութեան աստիճանի և այլն, կիրառում է համապատասխան բառեր ու սրտահայտութիւններ և ստեղծում է տվյալ պարագային ու միջավայրին համապատասխան ոճ ու խոսքաձև: «Լուքաշ անուամբ վօյթն առաքեաց

¹⁵ Նույն տեղում, էջ 20—21:

¹⁶ Նույն տեղում, էջ 208:

պատգամս առ վարդապետն ասելով թէ՝ մեծ իշխանն մեր թուղթ է ուղարկել մեզ՝ թե այդ վարդապետդ, որ ի թուրքի աշխարհէն եկեր է, չաշուտ է եղեր, հրաման չկայ, որ ի քաղաքէդ ելանէ, մի թողուք, որ երթայ, թե ոչ ձեր գլուխն կերթայ»¹⁸:

«Եւ ի հարցանելն արքայի ցվարդապետն, թե ի՞նչ խնդիր կայ քո ի թագաւորութենէս մերմէ: Պատասխանեալ ասաց վարդապետն. նախ երկարութիւն կենաց արքայի և հաստատութիւն աթոռոյ նորա, և երկրորդ՝ զի խաշաղարար թագաւորութեամբ քով, արքայ, ոչինչ գոյ պակաս ամենայն բարեաց ազգիս Հայոց»¹⁹:

Իսկ որպիսի՝ բնակ/սնոթյամբ է վարում ժողովրդական երկախոսությունները. ահա Շահ Աբասը իբրև հասարակ զինվոր խոսում է գյուղական քահանայի հետ. «Իբրև ետևս զնա (Ավետիս քահանային— Վ. Ա.) շահն, կոչեաց առ ինքն, եհարց, թե ի՞նչ մարդ ես. աւաց երէցն՝ հայ եմ. ասաց շահն՝ և է՞ր վասն երկայն է մօրուդ. ասաց երէցն, գելլիս երէցն եմ. ասաց շահն. եկ մուսուրման եղիր, ասաց երէցն, ես այր գոեհիկ եմ և մանաւանդ ծերացեալ եմ և ոչ կարեմ կատարել զարարողութիւն մուսուրման օրինաց»: Այսպես է խոսեցնում Դավրիժեցին իր անձանց՝ յուրաքանչյուրի խոսքում մի սլատշաճ արտահայտություն, համապատասխան քառ ու քերականական ձև է դնում, և անմիջապէս իմանում եք, թե ով է խոսում: Իսկ ինչ վերաբերում է պատկերավոր խոսքին, ասլա սլատմիչը գեղարվեստական գրողի նման գտնում է բնական համեմատություններ ու գույներ իր խոսքը գեղեցիկ ու ազդու դարձնելու: «Իսկ ողորմելի ժողովրդեանն հայեին յառաջ զանհուն գետն տեսանէին իբրև զծով, որ խեղդէր և յետուստ զսուրն Պարսից, որ սպանանէր... առհասարակ աղիողորմ ողբս և յորդ արտասուս յաչաց հեղեալ առնէին երկրորդ Երասխ» (գլուխ Դ): «Կամ զքանդումն տանց և այգեստանեաց, և զկոխումն արտորէից, և զհանումն համբարաց ցոլենոյ և զայլ սերմանեաց, և աւաբումն, և յափշտակումն ընչից և ստացուածոց, զուստերաց և զդստերաց, և սպանումն անսլարտ անձանց, զորս ի յայտնի և զորս ի գաղտնի, և զայլ ամենայն չարիսն, զոր ածին ի վերայ աշխարհի, մեզ ոչ գոյ կար թուելոյ, այլ այնմ, որ թուէ զբազմութիւն աստեղաց և ստեղծ զայնքան անձինս, որք մատենեցան անողորմ և մարդագէմ գաղանացն այնոցիկ»²⁰:

Անցյալում այն միտքն է հայտնվել, որ այս գրքի գրական արժեքը չնչին է, մինչդեռ մեր կարծիքով հայ հին գրականության պատմության մեջ Դավրիժեցին իր արժանի տեղը ունի թե՛ իբրև արժանահավատ պատմիչ և թե՛ իբրև գրական երկի հեղինակ:

XVII դարի մեր գրականությունն ու լեզուն, մանավանդ վերջինը, սպասում են իրենց ուսումնասիրողին: Ինչպիսի՝ տվյալներ կան Դավրիժեցու գրքում մեր բարբառների, աշխարհաբարի պատմության ուսումնասիրության և գրաբարի վերջին փուլի լեզվական երևույթների վիճակի բացահայտման համար: Որքա՞ն հայերեն նորակազմ բառեր են դուրս մնացել հին բա-

¹⁷ Լրտես:

¹⁸ Նույն տեղում, էջ 369:

¹⁹ Նույն տեղում, էջ 275:

²⁰ Նույն տեղում, էջ 43:

ռարաններից և չեն հավաքվել, բացատրվել նոր բառարաններում: Առաքել Դավրիժեցին վարպետ լեզվաշինարար է: Նրա կիրառած աշխարհաբարյան ձևերը գրաբարյան սխալներ չեն. դրանք պատմիչը բերել է լեզվի արհեստականության վերացման, բնականության ու հասկանալիության համար. այդպես էլ նորակերտ բառերը աչքի են ընկնում հակիրճությամբ, ճշտությամբ ու գեղեցկությամբ: Բերենք մի քանի օրինակներ. «Ձմեռն այն ծանրածմեռն և ձիւնամեծ էր» (գլուխ է), կացնակ, անմարդսծայն տեղիս, բեռաֆաշ, արտաֆեցեմ, լեռնավէմ, սեղանստեղ, իցակցութիւն, խազմասէր, բոնագլուխ, պասֆատոչոր, անխարդախաբարոյ, գրապան, ոխընկալ, ձիւնաբարդ և այլն: Ժողովրդասեր պատմիչը ամեն ջանք գործադրում է միայն և միայն հասկանալի դառնալու բոլոր կարգի ընթերցողներին ու լսողներին: Այս մտասեւեռումով այնքան է տարված, որ ոչ միայն իր կարծիքով անհասկանալի ամեն բառ բացատրում է (եկին յոլովք արք վաճառականք, զոր հայոց բառիւ փօրէզիկ ասեն և այլազգեաց բառիւ շարշի ասեն), այլև չքնաղակերտ ժողովրդական բառեր ու ասույթներ է կիրառում, որոնք իր գրաբարը կենդանի ու ճկուն են դարձնում. կոտենութիւն, նմլել, մթնագիշեր, սրտամեռ, կոտէն, խշկել, ջրխմիկ, ծկիկ, կանել, հիմնաւեր և այլն:

Այս լուսամիտ պատմիչը ոչ միայն պատմում է կենդանի դրաբարով, այլև, ինչպես երևում է, շատ լավ ծանոթ է մեր բարբառներին: Մի տեղ Վանի վանքերը թվարկելիս դրանք անվանում է վանեցիների նման: Իսկ ինչպես լավ է ուսումնասիրել Հայաստանի աշխարհագրությունը: Ամենաանշան գյուղի մասին էլ տեղեկություն ունի և անշփոթ կերպով հիշատակում է Հայաստանի բնակավայրերի հին ու նոր անունները, սրանց յուրաքանչյուրի հետ առնչվող պատմական դեպքերը:

Նա հայոց պատմության շարադրանքը վերցնում է լայն առումով: Գուցե առաջին պատմիչն է մեզանում, որ իր գրքում մայր հայրենիքի պատմության հետ հյուսում է հայ զաղութների մեջ կատարվող անցուդարձերը: Լեհահայոց եպիսկոպոս շարափառ Նիկոլի ու նրա շահատակությունների մասին խոսում է ամենայն մանրամասնությամբ: Քանի որ Հայաստանը ենթակա էր Պարսկաստանի ու Թուրքիայի տիրապետություններին, ուստի Առաքել Դավրիժեցին XVII դարի հայոց պատմությունը հյուսում է այդ երկրներում տեղի ունեցող քաղաքական անցուդարձերի և սրանց միջև կատարվող ռազմական ընդհարումների և այլ կարգի փոխհարաբերությունների հետ: Դավրիժեցին առանձին գլուխներով ներկայացնում է օսմանական ու պարսկական թագավորների ազգաբանությունն ու ժամանակագրությունը: Մեկը սկսում է 1242 թ. Օսման առաջինով և վերջացնում է 1623 թ., երբ թագավոր է դառնում սուլթան Մուրադը, իսկ պարսկական թագավորների կարգը սկսում է Սեֆյան հարստության սկզբից (XIV դարի կես) Շեյխ-Սեֆիով և վերջացնում է Շահ-Սուլեյմանով (1666 թ.):

Դավրիժեցու գիրքը Գրիգոր Դարանաղցու (Կեմախեցի), Զաքարիա Սարկավազի ժամանակագրությունների հետ կարևոր աղբյուր է Զալալիների շարժման ու գործունեության և Վրաստանի XVII դարի պատմության համար: Սա մի գիրք, մի բազմաբնույթ հիշատակարան է՝ բովանդակությամբ հարուստ, ժողովրդասիրությամբ տոգորված, հայ ժողովրդի անկախության ու սուղատության գաղափարի վառ արծարծումով հագեցած:

Չնայած գրքում տեղ գտած հրաշապատում վկայաբանությունների առատության, հեղինակի սնահավատության ու դյուրահավատության, պետք է նշել, որ Դավրիժեցին մեծ մասամբ ճիշտ է հասկանում ու քննադատում արևելյան բռնավորների քաղաքական միտումներն ու նպատակները: Դավրիժեցին դառնացած դատապարտում է այն հայերին, որոնք նպաստեցին Շահ Աբբասի բռնազաղթին և գտնում էին, որ շահը բարիք է ցանկանում հայ ժողովրդին: Իբրև պատմիչ ու ժամանակագրող Դավրիժեցին հստակ ըմբռնում է այդ աղետի քաղաքական ու տնտեսական դրդապատճառները և դրանցից բխող կործանարար ու ազգասպան հետևանքները հայ ժողովրդի համար: Նա իբրև գրող մեծ նորենացու գրական հմայքին է ենթարկված և նրա նման էլ ողբում է Հայաստանի ու հայ ժողովրդի զլխին պայթած մեծ զուլումի առիթով: «Եւ միանդամայն ասեմ, զի թշուառութիւնք և արհաւիրք անտանելիք հասին ի վերայ ալգիս մերոյ. և ոչ բաւեմ, թե որո՞ւ տարազու հիւսեցից ողբս դամբանականս և աշխարանաց ի վերայ բեկման հայկական սեռիս, որք այսքան շարակրութեանց եղեն ընդունակք: Զի թէպէտ ըստ սարասի²¹ հնոյն Իսրայէլի լինէին վարեալք գերի ձեռամբ երկրորդիս Բաբելացոց, այլ ոչ գոյր Երեմիա, որ խրատէր, և ոչ Նաբուքոնէզ, որ լուսաւորէր, և ոչ Յեսու կամ Զօրաբաբէլ, որ զդարձն առաջնորդէր, այլ եղեալք իբրև զհօտս անհովիտ ցրուեալք և հալածեալք առաջի գայլոց պատառողաց և գիշատող զազանաց, որք վարէին բռնութեամբ: Եւ նոքա երթալով երթային, և լային, որք բարձեալ տանէին զսերմանս իւրեանց: Իսկ յաջորդ սորին, ոչ եղև տեսանելի, որ ասէ՝ զալով եկեացեն և ցնծացեն, վասն ՚ի ոչ եկին և ոչ եղև ցրնծութիւն, այլ անդէն մնացին, ուր և տարեալ արգելին»²²:

Կարծեք պատմիչը ակնկալություն է ունեցել իր ժողովրդի վերադարձին, սակայն դառնացած է, որ արդեն անցել է կես դար, բայց արտաքսվածները չեն վերադարձել: Այս ողբերգության մեջ «ընթերցողի աչքի առջև շարունակ կանգնած է հեղինակի ինքնատիպ պատկերը: Դա մի հավատացյալ վանական է՝ լրցված վառ սիրով դեպի հայրենի աշխարհը, դեպի ազգային մտավոր-կուտուրական ստացվածքը ներկայացնող եկեղեցին»²³: Կաթողիկոս Հակոբ Զուղայեցու կենդանության օրոք Դավրիժեցու գործը լույս է տեսնում Ամստերդամում: 1669 թ.: Նա մինչև տպագրությունը հինգ օրինակ իր ծախսով արտագրել է տալիս, որ կորստից փրկի: Ամստերդամյան տպագրությունից հետո Դավրիժեցու գիրքը ունեցել է ևս երկու հրատարակություն (1884, 1896, էջմիածնում): 1874 թ. հրատարակվել է Ֆրանսերեն լրիվ թարգմանությունը: Ռուսերեն կա միայն ՄԳ զուխը Ք. Պատկանյանի թարգմանությամբ ու հրատարակությամբ:

Խոր ծերության հասակում՝ 1670 թ. էջմիածնում Դավրիժեցին կնքում է իր մահկանացուն իբրև ճանաչված ու հարգված հմուտ պատմիչ: Հանգչում է էջմիածնի միաբանության շիրմատանը մի պարզ քարի տակ, որի վրա գրված է. «Պատմադիրն այս է տապան Առաքել վարդապետի ՌՃԺԹ»:

²¹ Նմանության:

²² Նույն տեղում, էջ 44:

²³ Լեո, նշվ. աշխ., էջ 353:

АРАКЕЛ ДАВРИЖЕЦИ

(К 300-летию со дня смерти)

Доктор филологических наук В. Д. АРАКЕЛЯН

(Р е з ю м е)

Время творчества Аракела Даврижеци—один из самых критических периодов в армянской истории, когда насильственное переселение в Персию части западноармянского населения и почти всех жителей Араратской долины и Ширака сопровождалось поджогами и разрушениями, территория Армении была ареной постоянных военных столкновений между Персией и Турцией. Историческое повествование Аракела Даврижеци начинается именно с описания этих драматических для судеб армянского народа событий.

Наряду с описанием исторических событий, Даврижеци подробно перечисляет те культурные сдвиги, которые в этот период все же наблюдались в Армении. Он охотно анализирует мастерство талантливого армянского художника того времени—Минаса. Кроме того, Аракел Даврижеци не нагромождает язык своего повествования латинизмами, как это делалось его современниками в духе традиций, сложившихся в XVII в. Написанная на понятном армянском языке история Аракела Даврижеци содержит сведения, придающие ей характер ценного источника по истории сопредельных с Арменией стран, а в политическом отношении обнаруживает здравомыслие писателя, стоящего на стороне народа.